ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ավետիք Էլոյանի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N 111-Ա հրամանով հաստատվել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոցի N 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրներից բնակարան ձեռք բերելու հավակնորդ ծառայողների ցուցակը:
Նույն հրամանով սերվերի տվյալների բանկ մուտք գործելու, բանալի ստանալու և բնակարանների ընտրության վերջնաժամկետ սահմանվել է 2018 թվականի սեպտեմբերի 20-ը:

Այդ կապակցությամբ Ծրագրի հավակնորդների էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվելու են ծանուցումներ, որոնցում նշված կլինի Կոմիտեի արտաբյուջետային հաշվի համարը: Անհրաժեշտ է, որ հավակնորդները նշված հաշվեհամարին կատարեն 400.000 դրամ վճարում և վճարման կտրոնը ներկայացնեն Կոմիտե՝ մուտքի բանալի ստանալու համար (հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ, 448 և 453 սենյակ):

Հորդորում ենք հավակնորդներին պարբերաբար ստուգել էլեկտրոնային փոստը և սահմանված ժամկետում կատարել անհրաժեշտ գործողությունները:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N1734-Ն որոշմամբ մեկնարկել է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնց փողոցի N 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրներից բնակարանների վաճառքի կարգը, որի աշխատանքները՝ բաշխման ու վաճառքի, Հայաստանի Հանրապետության անունից կազմակերպում և ղեկավարում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն: